

**Հավելված
«Էյչնեթ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերության
տնօրենի 23.01.2026թ. թիվ Լ-26-1 հրամանի**

**«ԷՅՉՆԵԹ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՄԲ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՀԱՂՈՐԴԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՐԱԿԻՑ ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳՆ ՈՒ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.1. Սույնով սահմանվում են «Էյչնեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ նաև՝ **Էյչնեթ կամ Օպերատոր**) կողմից Բաժանորդներին մատուցվող էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները (այսուհետ՝ **Պայմաններ**):

1.2. Սույն Պայմանները հանդիսանում են էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման բաժանորդային պայմանագիր կնքելու հրապարակային օֆերտա (առաջարկ):

1.3. Սույն Պայմանները հանդիսանում են Բաժանորդների և Էյչնեթի (այսուհետ՝ **միասին նաև՝ Կողմեր**) միջև կնքված բաժանորդային պայմանագրի (այսուհետ՝ **Բաժանորդային Պայմանագիր**) անբաժանելի մասը:

1.4. Բաժանորդների և Էյչնեթի միջև կնքված Բաժանորդային պայմանագրի, սույն Պայմանների և այլ փաստաթղթերի միջև տարբերությունների և/կամ հակասությունների առկայության դեպքում համապատասխան փաստաթղթերի դրույթները կիրառվում են հետևյալ գերակայությամբ՝ (1) սույն Պայմաններ, (2) Բաժանորդային պայմանագիր, (3) Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներում և Պաշտոնական վեբ կայքում գետեղված Ծառայությունների մատուցման այլ պայմաններ, որոնք նախատեսված չեն սույն Պայմաններում:

1.5. Սույն Պայմաններն, ինչպես նաև դրանցում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող իրավական ակտերը հրապարակվում են Էյչնեթի Պաշտոնական ինտերնետային կայքում: Սույն Պայմաններն, ինչպես նաև դրանցում փոփոխություններ ու լրացումներ նախատեսող իրավական ակտերը ուժի մեջ են մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե այլ բան սահմանված չէ տվյալ իրավական ակտերով:

1.6. Այն ամենն ինչը կարգավորված չէ սույն Պայմաններով, ինչպես նաև Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներում և/կամ Պաշտոնական ինտերնետային կայքում գետեղված Ծառայությունների մատուցման այլ պայմաններով

կարգավորվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ:

1.7. Սույն Պայմանագրերը, Բաժանորդային Պայմանագիրը և Օպերատորի այլ իրավական ակտերը կազմված է հայերեն լեզվով, սակայն կարող են թարգմանվել և հրապարակվել նաև այլ լեզուներով: Հայերենի և այլ լեզվով տարբերակների միջև հակասության դեպքում գերակա է հայերեն տարբերակը:

1.8. Սույն Պայմանագրերում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1.8.1. Օպերատոր՝ «Էյչնեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն,

1.8.2. Օպերատորի ցանց (Ցանց)՝ Էյչնեթին պատկանող հաղորդման համակարգ, իսկ համապատասխան դեպքերում նաև միացնող - անջատող կամ ուղղորդող սարքավորումներ և այլ ռեսուրսներ, որոնք թույլ են տալիս հաղորդել ազդակներ (սիգնալներ) մալուխով, ռադիոյով, օպտիկական կամ այլ էլեկտրամագնիսական միջոցներով, այդ թվում՝ արբանյակային ցանցով, ամրակցված ցանցով և շարժական կապի երկրային ցանցով, էլեկտրական էներգիայի գծային համակարգերով այնպես, որ դրանք օգտագործվեն ազդակների հաղորդման համար՝ անկախ հաղորդվող տեղեկատվության տեսակից,

1.8.3. Ցանցի Հասանելիության Տարածք՝ այն հասցեն (տարածքը), որտեղ տեխնիկապես հասանելի են Էյչնեթի Ամրակցված ցանցով մատուցվող ծառայությունները:

1.8.4. Հանրային էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայություններ (այսուհետ՝ Ծառայություն կամ Ծառայություններ)՝ Էյչնեթի կողմից մատուցվող ծառայություններ, որոնք ներառվում, բայց չեն սահմանափակվում ստորև նշված ցանկով, և որոնց նկարագրությունը, առանձնահատկություններն ու արժեքը (գնացուցակը), հրապարակված են Էյչնեթի պաշտոնական Վեբ-կայքում և ներկայացված են Էյչնեթի Վաճառքի և սպասարկման կենտրոններում.

- ընդհանուր օգտագործման ինտերնետ կապուղու տրամադրում,
- մալուխային հեռուստատեսություն (ՄՀՏ),

1.8.5. Զանգերի սպասարկման կենտրոն՝ Էյչնեթի մասնագիտացված կենտրոն, որտեղ զանգահարելով՝ Բաժանորդը կարող է տեղեկություն ստանալ իրեն մատուցվող Ծառայությունների, հաշվարկված վճարների, Էյչնեթի կողմից մատուցվող հավելյալ ծառայությունների, ինչպես նաև Ծառայությունների ընդհատման (դադարեցման) պատճառների վերաբերյալ, անհրաժեշտության դեպքում ստանալով տեխնիկական բաժնի մասնագետի աջակցությունը,

1.8.6. Օպերատորի պաշտոնական ինտերնետային (վեբ) կայք՝ [«www.fastnet.am»](http://www.fastnet.am),

1.8.7. Վաճառքի և սպասարկման սրահ՝ Օպերատորի կողմից սահմանված Ծառայությունների վաճառքի և Բաժանորդների սպասարկման համար մասնագիտացված սրահ,

1.8.8. Բաժանորդ՝ ցանկացած անձ, որը սույն Պայմանագրով սահմանված կարգով ներկայացրել է դիմում՝ Բաժանորդային պայմանագիր կնքելու համար (ակցեպտավորել է սույն հրապարակային առաջարկը/օֆերտան),

1.8.9. Դիմում՝ Պայմանագրին համապատասխան Բաժանորդի կողմից ստորագրված և Օպերատորին ուղղված գրավոր փաստաթուղթ, որով Օպերատորի և Բաժանորդի միջև կնքվում է Բաժանորդային պայմանագիր,

1.8.10. Պահանջվող փաստաթղթեր՝ Բաժանորդային պայմանագիր կնքելու համար Բաժանորդի կողմից կից ներկայացվող փաստաթղթեր, ինչպես նաև Բաժանորդի կողմից Օպերատորի որոշ գործողություններ հայցելու ժամանակ ներկայացվող փաստաթղթեր,

1.8.11. Սարք՝ ամրակցված ցանցով մատուցվող Ծառայություններ տրամադրելու համար Օպերատորի կողմից օգտագործման իրավունքով Բաժանորդին տրամադրված սարք կամ սարքեր իր (իրենց) պատկանելիքներով և մալուխ(-ներ)ով, որոնց նկարագրությունը ներկայացված է Օպերատորի պաշտոնական ինտերնետային (վեբ) կայքում,

1.8.12. Տեխնիկական հնարավորություն՝ Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովելու համար Բաժանորդին՝ Օպերատորի հեռահաղորդակցության ենթակառուցվածքներին միացման հնարավորություն,

1.8.13. Ցանցային միացումներ՝ մալուխով և/կամ ռադիոփոխանցման միջոցով միացում հեռահաղորդակցության միացման ենթակառուցվածքներին՝ Էլեկտրոնային հաղորդակցությունն ապահովելու համար,

1.8.14. Ցանցի Հասանելիության Տարածք՝ այն հասցեն (տարածքը), որտեղ տեխնիկապես հասանելի են ԷյՋնեթի ամրակցված ցանցով մատուցվող Ծառայությունները,

1.8.15. Տարածք՝ բնակարան/բնակելի տուն կամ այդպիսի նպատակի համար ծառայող տարածք, որտեղ Բաժանորդը ցանկանում է ստանալ ԷյՋնեթի ամրակցված ցանցով մատուցվող Ծառայությունները,

1.8.16. Բիլինգային Համակարգ՝ ավտոմատացված համակարգ, որը հաշվառում է Բաժանորդին մատուցված Ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը, հաշվարկում Բաժանորդների պարտքերը և ստացված վճարումները և ներկայացնում ամփոփ արդյունքներ (քաղվածք),

1.8.17. Բիլինգի Օր՝ յուրաքանչյուր ամսվա վերջին օրը կամ Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ օր, երբ ամփոփվում է Բիլինգային ժամանակաշրջանում Բաժանորդին մատուցված Ծառայությունների դիմաց գեներացված և Բաժանորդի կողմից արդեն վճարված կամ վճարման ենթակա գումարը (այն լինում է ամսվա մեջ մեկ օր),

1.8.18. Բիլինգի կամ հաշվետու ժամանակաշրջան՝ Բիլինգի Օրվանից մինչև հաջորդ Բիլինգի Օրն ընկած Հաշվետու ժամանակահատվածը (մեկ ամիս),

1.8.19. Սակագնային Փաթեթ(-ներ)՝ մի քանի տարբեր Ծառայություններ իր մեջ ներառող և մեկ անվանմամբ ու արժեքով (գնով) հաշվարկվող Ծառայություն,

1.8.20. Պահպանման աշխատանքներ՝ Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու համար Օպերատորի կողմից իրականացվող՝ Օպերատորի Ցանցի վերազինման, վերականգնման, վերանորոգման, թարմացման, ընդլայնման, փոխարինման, պահպանման, ամրապնդման, վերադասավորման, ինչպես նաև վթարների, թերությունների և անսարքությունների վերացման կամ նմանատիպ այլ աշխատանքներ,

1.8.21. Անձնական հաշիվ՝ ֆիզիկային համակարգում վարվող անալիտիկ հաշիվ, որն օգտագործվում է Բաժանորդին մատուցվող Ծառայությունների տեսակների, ծավալների, արժեքների և դրանց դիմաց գանձվող վճարումների հաշվառման համար,

1.8.22. Հաշվեկշիռ՝ Բաժանորդի Հաշվի տվյալների հիման վրա հաշվարկային եղանակով սահմանված մեծություն, որը հանդիսանում է ժամանակի պահի դրությամբ Բաժանորդի կողմից օգտագործված Ծառայությունների և կատարված վճարումների տարբերությունը,

1.8.23. Բաժանորդի նույնականացման տվյալներ՝ Պայմանագրում ներկայացրած անձի անունը, ազգանունը, հայրանունը, ծննդյան տարին, ամիսը և ամսաթիվը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը, հարկ վճարողի հաշվառման համարը և պետական գրանցման համարն ու տարեթիվը), անձը հաստատող փաստաթղթի (անձնագիր կամ նույնականացման քարտ) տվյալները (իրավաբանական անձի դեպքում՝ քաղվածք իրավաբանական անձանց պետական ռեգիստրից), հաշվառման և/կամ բնակության հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ գտնվելու և/կամ գործունեության վայրը), բջջային հեռախոսահամար, էլեկտրոնային փոստի հասցեն, ինչպես նաև նմանատիպ այլ տվյալներ, որոնք օգտագործվում են առանձին կամ միասին:

2. ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐԸ, ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՐԳԸ

2.1. Պայմանները հանդիսանում են Օպերատորի՝ մատուցվող Ծառայությունների հրապարակային առաջարկ (օֆերտա), որը Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձի կողմից այն ընդունելու (ակցեպտավորելու) պահից հանդիսանում է Բաժանորդի և Օպերատորի միջև կնքված և պարտադիր իրավական ուժ ունեցող Բաժանորդային պայմանագիր:

2.2. Բաժանորդային պայմանագիրը ընդունվում (ակցեպտավորվում) է սույն Պայմաններում սահմանված ձևով ու կարգով ստորագրված Պայմանագիրը Օպերատորին ներկայացնելու եղանակով՝ ամբողջությամբ և անվերապահորեն ընդունելով սույն Պայմանները:

2.3. Բաժանորդային պայմանագիրը բաղկացած է Օպերատորի կողմից Վաճառքի և սպասարկման սրահներում և/կամ Օպերատորի պաշտոնական

ինտերնետային կայքում զետեղված սույն Պայմաններից, Սակագնային պլանից/փաթեթից, Ծառայությունների մատուցման այլ պայմաններից:

2.4. Բաժանորդային պայմանագիրը համարվում է կնքված Բաժանորդային պայմանագիրը ստորագրելու պահից:

2.5. Բաժանորդային պայմանագիրը կարող է կնքվել անորոշ կամ որոշակի ժամկետով: Այն դեպքում, երբ Բաժանորդային պայմանագիրը կնքված է որոշակի ժամկետով, ապա պայմանագրում կատարվում է առանձին նշում, ըստ որի այդ ժամկետի ավարտից հետո Բաժանորդային պայմանագրի ժամկետը կարող է երկարացվել նույն ժամկետով և Օպերատորը շարունակում է մատուցել Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային փաթեթով նախատեսված Ծառայությունները, եթե վերջինս սույն Պայմանների 8.2-րդ կետով սահմանված ժամկետում չի ներկայացրել դիմում (առարկություն) Բաժանորդագրության պայմանագրի լուծման համար: Բաժանորդը նախապես տեղեկացվում է որոշակի ժամկետով կնքված պայմանագրի ժամկետի ավարտից հետո յուրաքանչյուր անգամ դրա ինքնաբերաբար երկարացման (երկարաձգման) ու այդ կապակցությամբ առարկություն ներկայացնելու կարգի ու ժամկետների մասին պայմանագիրը կնքելիս: Պայմանագրի ժամկետը լրանալուց 1 (մեկ) ամիս առաջ Օպերատորն այդ մասին ծանուցում է Բաժանորդին: Բաժանորդը կարող է, ցանկության դեպքում, կատարել փոփոխություններ Բաժանորդային պայմանագրում՝ պահպանելով սույն Պայմանների 4.2 կետով սահմանված կարգը:

2.6. Բաժանորդն իրավունք չունի Օպերատորից ստացված Ծառայությունները վերավաճառել այլ անձանց կամ օգտագործել Ծառայություններն էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման նպատակներով: Սույն կետի առաջին նախադասությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում՝ Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել, իսկ Բաժանորդը պարտավոր է Օպերատորին վճարել տուգանք՝ մատուցվող Ծառայությունների ընդհանուր արժեքի կրկնապատիկի չափով: Սույն կետի առաջին նախադասությամբ սահմանված պահանջները խախտելու դեպքում Օպերատորն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Բաժանորդին հետագա Ծառայությունների մատուցումից՝ սույն Պայմաններով սահմանված կարգով և ժամկետում նախապես ծանուցելով Բաժանորդին:

2.7. Բաժանորդային պայմանագիր կնքելու համար Բաժանորդ դառնալու ցանկություն ունեցող անձի կողմից Պայմանագիրը կնքելիս՝ այդ թվում որոշ գործառնություն (գործառնություններ) հայցելիս, ներկայացվում են հետևյալ Պահանջվող փաստաթղթերը.

2.7.1. Ֆիզիկական անձ Բաժանորդի դեպքում՝

- Անձը հաստատող փաստաթուղթ՝ անձնագիր կամ նույնականացման քարտ,
- ՀՀ քաղաքացիների դեպքում՝ հանրային ծառայությունների համարանիշ (ՀՇՀ)

կամ հանրային ծառայությունների համարանիշ չունենալու մասին տեղեկանք, իսկ օտարերկրյա քաղաքացիների կամ քաղաքացիություն չունեցող անձի դեպքում՝ ՀՀ տարածքում կացության կարգավիճակը հաստատող փաստաթուղթ (առկայության

դեպքում),

- Բաժանորդի ներկայացուցչի միջոցով հանդես գալու դեպքում՝ նոտարական կարգով հաստատված լիազորագիր և ներկայացուցչի անձը հաստատող փաստաթուղթ,

- Օպերատորի պահանջի դեպքում՝ Բաժանորդի այն տարածքի նկատմամբ իր իրավունքը հաստատող փաստաթուղթը, որտեղ պետք է տեղադրվի Սարքը և մատուցվեն Ծառայությունները,

- Օպերատորի պահանջով անհրաժեշտության դեպքում նաև այլ փաստաթղթեր:

2.7.2. Իրավաբանական անձ Բաժանորդի դեպքում՝

- Իրավաբանական անձի վերաբերյալ քաղվածք իրավաբանական անձանց պետական ռեգիստրից (պետական գրանցման վկայական),

- հարկ վճարողի հաշվառման համարը (եթե նշված չէ պետական գրանցման վկայականում),

- Իրավաբանական անձի անունից հանդես եկող ներկայացուցչի անձը և նրա լիազորությունը հաստատող փաստաթուղթ,

- Օպերատորի պահանջի դեպքում՝ Բաժանորդի այն տարածքի նկատմամբ իր իրավունքը հաստատող փաստաթուղթը, որտեղ պետք է տեղադրվի Սարքը և մատուցվեն Ծառայությունները,

- Օպերատորի պահանջով անհրաժեշտության դեպքում նաև այլ փաստաթղթեր:

2.7.3. Սույն Պայմանների 2.7.1 և 2.7.2 ենթակետերով սահմանված փաստաթղթերը Անհատ ձեռնարկատիրոջ Բաժանորդի կողմից Պայմանագիրը Կնքելիս պահանջվում են վերջինիս կարգավիճակի առանձնահատկությունների հաշվառմամբ:

2.8. Բաժանորդի կողմից Օպերատորին ներկայացված փաստաթղթերով հավաստվող տվյալների փոփոխության դեպքում, Բաժանորդը պարտավոր է 10 (տասը) օրվա ընթացքում այդ մասին հայտնել Օպերատորին և ներկայացնել գործող տվյալները հավաստող փաստաթղթերը:

2.9. Բաժանորդային պայմանագիր կնքելու համար Բաժանորդը ներկայացնում է հստակ նշում է նախընտրած Ծառայությունների ցանկը, Սակագնային պլանները/փաթեթները:

2.10. Պայմանագիրը կնքելիս հետ մեկտեղ ներկայացվում են համապատասխան Պահանջվող փաստաթղթերը:

2.11. Բաժանորդի կողմից կնքվող Պայմանագրի, փաստաթղթերի, այդ թվում նաև անվանափոխության, լուծման և այլ նմանատիպ դիմումների ձևը և բովանդակությունը սահմանում է Օպերատորը:

2.12. Պայմանագիրը պետք է ստորագրված լինի Բաժանորդի կողմից կամ նրա լիազորված անձի կողմից:

2.13. Բաժանորդը Պայմանագիրը կարող է կնքել Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահում, կամ Օպերատորի կողմից հանդես գալու իրավունք ունեցող անձի հետ:

2.14. Կնքելով Բաժանորդային պայմանագիրը Կողմերը հաստատում ու հավաստիացնում են, որ՝

- ունեն Բաժանորդային Պայմանագիրը կնքելու և դրա պայմաններն ու դրույթները կատարելու համար անհրաժեշտ բոլոր լիազորություններն ու իրավասությունները,

- Բաժանորդային պայմանագիրը համարվում է պատշաճ կերպով ստորագրված և իրավաբանական ուժ ունի Կողմերի համար,

- պատշաճ կերպով կատարվել են բոլոր անհրաժեշտ իրավական գործողությունները, որոնցով Կողմերին իրավունք կվերապահվի իրագործել Բաժանորդային պայմանագրով սահմանված իրավունքներն ու պարտավորությունները:

2.15. Բաժանորդի հետ Պայմանագիրը կնքելիս նշվում է Օպերատորի կողմից հայտարարված այն Սակագնային պլանը/փաթեթը, որի պայմաններով նա ցանկանում է ստանալ Ծառայությունները, ինչպես նաև, հնարավորության դեպքում, Օպերատորի կողմից ներկայացված սարքերից ընտրում է այն սարքը, որի միջոցով կարող են մատուցվել Ծառայությունները:

2.16. Օպերատորն իրավունք ունի մերժել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը, եթե մերժումը պայմանավորված է Օպերատորի Տեխնիկական հնարավորությունների բացակայությամբ, այդ թվում նաև այն դեպքում, երբ Բաժանորդի կողմից պահանջվող Ծառայությունների մատուցման աշխարհագրական տարածքը դուրս է Ցանցի հասանելիության տարածքի սահմաններից կամ պահանջում է չհիմնավորված ծախսեր, ինչպես նաև այն դեպքում, երբ Բաժանորդը չի ներկայացրել Պահանջվող փաստաթղթերը:

2.17. Օպերատորն իրավունք ունի նաև մերժել Բաժանորդին Ծառայությունների մատուցումը, եթե Ծառայությունների մատուցման ցանկալի հասցեում մեկ այլ Բաժանորդային պայմանագրի շրջանակներում արդեն մատուցված Ծառայությունների դիմաց կան չմարված պարտավորություններ և այդ անձինք ունեն ընդհանուր տնտեսական շահ:

2.18. Բաժանորդի պահանջի մերժման մասին Օպերատորը 7 (յոթ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնում է Բաժանորդին: Օպերատորը Բաժանորդին մերժման մասին ծանուցում է հեռախոսային կապի միջոցով կամ էլեկտրոնային փոստով, որը Բաժանորդը նշել է: Գրավոր ձևով մերժման մասին ծանուցումն Օպերատորը հանձնում է Բաժանորդին իր Վաճառքի և սպասարկման սրահում կամ փոստով՝ Բաժանորդի կողմից նշված հասցեով:

Մերժման ծանուցումը ներկայացնելու (ուղարկելու) պահից Բաժանորդային պայմանագիրը համարվում է լուծված:

2.19. Ծառայությունները մատուցվում են Օպերատորի Ցանցի առկա տեխնիկական հնարավորություններին և թողունակությանը, Ցանցի Ծածկույթին/Հասանելիության Տարածքին, օգտագործվող սարքավորումների հնարավորություններին ու առանձնահատկություններին համապատասխան և դրանց

սահմաններում:

2.20. Օպերատորի Ցանցի անխափան աշխատանքը, անվտանգությունն ու Ծառայության որակն ապահովելու, Ցանցի հնարավորությունները հավասարաչափ բաշխելու, ինչպես նաև Ծառայությունների հասանելիությունն ապահովելու համար Օպերատորն ինքն է սահմանում անհրաժեշտ տեխնիկական միջոցները, այդ թվում՝ Օպերատորն իրավունք ունի իր հայեցողությամբ ձեռնարկելու իրավիճակին համապատասխան միջոցառումներ, կիրառելու Ծառայությունների ծավալի և/կամ արագության սահմանափակումներ և սահմանելու առաջնահերթություններ: Նշվածի մասին, հնարավորության դեպքում, Օպերատորը պետք է տեղեկացնի Բաժանորդներին հրապարակային հայտարարություններ անելու միջոցով:

2.21. Օպերատորը ձեռնարկում է հնարավոր ողջամիտ միջոցներն ապահովելու համար Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումը և Բաժանորդի հասանելիությունը Ծառայությանը և Ցանցին, սակայն Ծառայությունների պատշաճ և շարունակական մատուցումն ապահովելու Օպերատորի պարտականությունը լավագույն ջանքերը գործադրելու պարտականություն է, և ոչ ավելին: Ըստ այդմ, Օպերատորը չի երաշխավորում՝

2.21.1. այնպիսի հանգույցների կամ սերվերների հետ տեղեկատվության փոխանակումը, որոնք ժամանակավոր կամ մշտապես անհասանելի են ինտերնետային ցանցի միջոցով,

2.21.2. Ծառայությունների մատուցման ընթացքում ընդհատումների, սխալների, արագության և որակի անկումների, տատանումների և այլ խափանումների ու խաթարումների բացակայությունը, ինչպես նաև Ծառայության հասանելիության անընդհատությունը,

2.21.3. Օպերատորի Ցանցի հետ հասանելիության հաստատումը՝ նախապես հայտարարված տեսական կամ միջին արագության առավելագույն հնարավորությամբ:

2.22. Ծառայություններից օգտվելու և/կամ դրանց հասանելիություն ունենալու հնարավորությունը կամ Ծառայությունների որակը կախված է ստորև նշված այնպիսի հանգամանքներից և գործոններից, որոնք կարող են առաջացնել մատուցվող Ծառայության ընդհատումներ, որակի վատացումներ, կապի արագության տատանումներ կամ այլ խափանումներ, և որոնք դուրս են Օպերատորի վերահսկողությունից: Այդպիսի հանգամանքներ ու գործոններ են՝

2.22.1. ոչ բարենպաստ աշխատանքային միջավայրը (խոնավության աստիճան, սարքավորման բնականոն աշխատանքի համար չնախատեսված շատ բարձր կամ ցածր ջերմաստիճան և այլն),

2.22.2. Բաժանորդի անձնական սարքավորման որակը, հնարավորությունները և առանձնահատկությունները, տեխնիկական անսարքությունը կամ սխալ կարգաբերումները (մատուցվող Ծառայության հետ անհամատեղելի օպերացիոն համակարգերը, վիրուսները և այլն),

2.22.3. այլ օպերատորների ցանցերի և սարքավորումների որակը, առանձնահատկություններն և հնարավորությունները, նրանց ցանցում առկա սահմանափակումները, վթարները, անսարքությունները, վերջիններիս աշխատանքային ռեժիմը, ցանցային կամ կայանի վթարները կամ անսարքությունները,

2.22.4. ֆորս-մաժորային իրավիճակները (ջրհեղեղներ, երկրաշարժեր, պատերազմ, պետական մարմինների որոշումներ, էլեկտրասնուցման խափանումներ, համաճարակներ և այլն),

2.22.5. կամ նմանատիպ այլ հանգամանքները:

2.23. Օպերատորը պարտավոր է վերականգնել բաժանորդին մատուցվող Ծառայություն(-ներ)ը՝ ընդհատման պատճառի վերացումից հետո՝ 48 ժամվա ընթացքում:

2.24. Օպերատորը Ծառայությունները մատուցում է շուրջօրյա (շաբաթը յոթ օր, օրը քսանչորս ժամ) ռեժիմով՝ առանց ընդհատումների:

2.25. Եթե Ծառայությունների մատուցման ռեժիմը խախտվում է սույն Պայմաններով չսահմանված և Օպերատորի հսկողության տիրույթում գտնվող պատճառներով, խափանման կամ անսարքության մասին տեղեկանալուց հետո Օպերատորը պարտավոր է ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

2.26. Օպերատորի կողմից Ծառայությունների մատուցումը պահանջում է Բաժանորդի տարածքում Սարքի տեղադրում: Տեխնիկական հնարավորությունների առկայության և սույն Պայմանների պահանջները բավարարելու դեպքում Պայմանագիրը կնքելու և Պահանջվող փաստաթղթերն Օպերատորին ներկայացնելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը պարտավոր է Բաժանորդի տարածքում տեղադրել համապատասխան Սարքը և միացնել Ցանցին:

2.27. Եթե Բաժանորդն ունի Օպերատորի պահանջներին համապատասխանող սարք, որով ըստ Օպերատորի մասնագետների հնարավոր կլինի օգտվել Օպերատորի կողմից մատուցվող Ծառայություններից, ապա Բաժանորդի ցանկությամբ, Տեխնիկական հնարավորությունների առկայության և սույն Պայմանների պահանջները բավարարելու դեպքում Պայմանագիրը կնքելու և Պահանջվող փաստաթղթերն Օպերատորին ներկայացնելու օրվանից 10 (տասը) աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորը պարտավոր է համապատասխան ցանցային միացումները ապահովելով միացնել Բաժանորդի սարքը Ցանցին:

2.28. Սույն Պայմանները և որոշ այլ փաստաթղթեր, որոնց Բաժանորդը կարող է ծանոթանալ և ձեռք բերել Պաշտոնական վեբ կայքից, Բաժանորդի կողմից գրավոր չպահանջելու դեպքում թղթային տարբերակով վերջինիս չեն տրամադրվում:

2.29. Բաժանորդն իրավունք ունի Օպերատորի կողմից սահմանված կարգով փոփոխելու նախընտրած Ծառայությունների ցանկը, Մակագնային պլանները/փաթեթները (բացառությամբ Օպերատորի Պաշտոնական վեբ կայքում գետեղված Ծառայությունների մատուցման այլ պայմաններով սահմանված դեպքերի)՝

ներկայացնելով համապատասխան դիմումը և Պահանջվող փաստաթղթերը, պայմանով, որ այդպիսի պահանջ ներկայացնելու պահին Բաժանորդը Օպերատորի նկատմամբ չի ունենա չմարված պարտք:

2.30. Բաժանորդի կողմից ներկայացված բողոքը (դիմումը)՝ ծառայությունների որակի վերաբերյալ Օպերատորի կողմից քննարկվում է առավելագույնը 15 աշխատանքային օրվա ընթացքում և դրա քննարկման արդյունքների վերաբերյալ տեղեկացնում է Բաժանորդին:

2.31. 2.31. Ծառայությունների ընդհատման (ներառյալ՝ խափանման կամ անսարքության) կամ ծառայությունների որակի անկման փաստի հաստատման դեպքերում Բաժանորդի գրավոր պահանջի (դիմումի) հիման վրա Օպերատորը 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում որպես փոխհատուցում չի գանձում վճար առնվազն ծառայությունների ընդհատման կամ ծառայությունների որակի անկման ժամանակահատվածի համար: Եթե ծառայությունների մատուցման վճարը գանձվել է նախապես, ապա այն փոխհատուցվում է առնվազն ծառայությունների ընդհատման կամ ծառայությունների որակի անկման ժամանակահատվածի համար հաշվարկված ծառայությունների մատուցման վճարի չափով՝ բայց ոչ ավելի, քան տվյալ հաշվարկային ժամանակահատվածի համար ծառայությունների մատուցման վճարի չափը:

Սույն կետով սահմանված փոխհատուցումը ստանալու վերաբերյալ գրավոր պահանջը (դիմումը) Բաժանորդի կողմից Օպերատորին ներկայացվում է մինչև ծառայությունների մատուցման դիմաց վճարման համար ծառայություններ մատուցողի կողմից սահմանված ժամկետի ավարտը կամ մինչև հաշվարկային ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 15-ը և պետք է առնվազն ներառի մատուցված ծառայությունները պայմանագրով նախատեսված պայմաններին չհամապատասխանելու մասին հիմնավոր տեղեկություններ և նշում ծառայության ընդհատման կամ որակի անկման խնդրի բացահայտման մասին Օպերատորին նախապես (ծառայության ընդհատման կամ որակի անկման ընթացքում) տեղեկացրած լինելու վերաբերյալ, իսկ սույն Պայմանների 2.32-րդ կետի 2-րդ ենթակետով նախատեսված դեպքում՝ նաև Օպերատորի կողմից ծառայությունների մատուցման պայմանագրով սահմանված ընթացակարգով՝ ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների հոսքի ներբեռնման և վերբեռնման արագության չափման տվյալներ՝ Օպերատորի կողմից առաջարկվող ծրագրային համակարգի միջոցով:

2.32. Սույն Պայմանների 2.31-րդ կետով սահմանված փոխհատուցումը կարող է տրամադրվել՝

2.32.1. Եթե ծառայությունների նախատեսված (պլանային) ընդհատման կամ Բաժանորդի դիմումի հիման վրա՝ ծառայությունների չնախատեսված ընդհատման տևողությունը հաշվարկային ժամանակահատվածում գերազանցում է 24 ժամը, որը չի ներառում Բաժանորդի պատճառով ծառայություններ մատուցողի կողմից ընդհատումը վերականգնելու անհնարինության, գծի ենթակառուցվածքի կառուցման (տեղադրման

կամ տեղափոխման) աշխատանքների շրջանակում ծառայություններ մատուցողի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներով կամ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից սահմանված էլեկտրամատակարարման թույլատրելի պլանային, վթարային ընդհատմամբ, ինչպես նաև Բաժանորդի էլեկտրամատակարարման թույլատրելի դադարեցմամբ պայմանավորված ծառայությունների մատուցման ընդհատման ժամանակահատվածները: Սույն ենթակետը կիրառելի չէ «Էլեկտրոնային հաղորդակցության մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 1-3-րդ և 5-6-րդ կետերով նախատեսված՝ ծառայությունների մատուցման սահմանափակման դեպքերում:

2.32.2. Եթե Բաժանորդի դիմումի դեպքում ծառայություններ մատուցողը ծառայությունների որակի ստուգման արդյունքում պարզում է, որ մատուցված ծառայությունները չեն համապատասխանել ծառայությունների մատուցման պայմանագրով նախատեսված պայմաններին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ: ԱՄՐԱԿՑՎԱԾ ԿԱՊԻ ՑԱՆՑՈՎ ԻՆՏԵՐՆԵՏ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԱԳՈՒԹՅԱՆ ՇԵՄԵՐԸ ԵՎ ՈՐԱԿԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ

3.1. Օպերատորը Ծառայությունները մատուցում է ՀՀ օրենսդրությանը, Օպերատորին տրամադրված լիցենզիաներին և թույլտվություններին, Բաժանորդային Պայմանագրին, սույն Պայմաններին ու ներքին այլ ակտերին համապատասխան:

3.2. Ծառայությունների նկարագրությունը, Ծառայությունների նկատմամբ կիրառելի սակագները, պայմանները և կանոնները սահմանվում են Օպերատորի կողմից: Օպերատորը կարող է որպես մեկ ծառայություն մատուցել ծառայությունների միասնական փաթեթ:

3.3. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունների, Սակագնային պլանների/փաթեթների առանձնահատկությունները, բնույթը, տեսակը, նկարագրությունը, դրանց նկատմամբ կիրառվող սակագները, զեղչային ու այլ առաջարկները և այլ տեղեկություններ մանրամասնորեն ներկայացվում են Վաճառքի և սպասարկման սրահներում և Պաշտոնական վեբ կայքում:

3.4. Ծառայությունները մատուցվում են Օպերատորի ցանցի առկա տեխնիկական հնարավորությունների սահմաններում:

3.5. Օպերատորի կողմից սահմանված դեպքերում Ծառայությունները կարող են մատուցվել Օպերատորի և իր կողմից նշված երրորդ անձանց կողմից համատեղ:

3.6. Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունները հետևյալն են՝

- Լայնաշերտ ինտերնետ հասանելիության ծառայություն,
- Հեռուստատեսության ծառայություն (IP TV, OTT):

3.7. Ծառայությունները մատուցվում են Բաժանորդին օգտագործման

իրավունքով, իսկ սույն Պայմաններով կամ Պայմանագրով նախատեսված դեպքերում նաև սեփականության իրավունքով, տրամադրված Սարքի կամ Բաժանորդի՝ Օպերատորի կողմից սահմանված տեխնիկական պայմաններին համապատասխանող սարքի Ցանցին միացման եղանակով:

3.8. Ծառայությունները մատուցվում են կանխավճարային կամ հետվճարային հիմունքներով:

3.9. Ծառայությունները մատուցվում են Հայաստանի Հանրապետության տարածքում:

3.10. Դառնալով Բաժանորդային պայմանագրի կողմ՝ Բաժանորդը լռելյայն տալիս է իր համաձայնությունը ստանալու գովազդային, առևտրային և/կամ այլ հաղորդագրություններ Օպերատորի կողմից մատուցվող Ծառայությունների վերաբերյալ բջջային հեռախոսահամարի և/կամ էլեկտրոնային փոստի միջոցով, որը Բաժանորդը նշել է Պայմանագրի մեջ: Դրանք ստանալուց հրաժարվելու ցանկության մասին Բաժանորդը պետք է գրավոր տեղեկացնի Օպերատորին:

Սույն կետով նախատեսված գովազդային նյութերի վերաբերյալ ծանուցումներ ստանալուց հրաժարվելու Բաժանորդի իրավունքը չի տարածվում Բաժանորդի և Օպերատորի միջև հաղորդակցության շրջանակներում՝ այդ թվում սույն Պայմանների կամ Օպերատորի կողմից ընդունված այլ իրավական ակտերի ընդունման ու դրանց փոփոխությունների վերաբերյալ Բաժանորդին ծանուցումներ ուղարկելու վրա:

3.11. Ծառայության արագության թույլատրելի սահմանաչափերը

Օպերատորի կողմից մատուցվող ինտերնետ հասանելիության ծառայությունների տվյալների փոխանցման փաստացի արագությունը (ներբեռնում/վերբեռնում) բաժանորդի վերջնակետում (սարքավորման վրա) կարող է տատանվել՝ պայմանավորված սույն Պայմանների 3.12 կետում սահմանված տեխնիկական և արտաքին գործոններով: Սովորական պայմաններում (առանց վթարային կամ ֆորս-մաժորային իրավիճակների) սահմանվում են արագության հետևյալ թույլատրելի շեմերը.

Սովորաբար հասանելի արագություն. Բաժանորդի վերջնակետում հասանելի տվյալների փոխանցման փաստացի արագությունը ժամանակի գերակշիռ հատվածում պետք է կազմի տվյալ սակագնային պլանով նախատեսված և գովազդվող առավելագույն արագության առնվազն 70%-ը:

Նվազագույն երաշխավորված արագություն. Ցանցի ընդհանուր ծանրաբեռնվածության կամ տեղային այլ տեխնիկական խնդիրների ծագման դեպքում, Օպերատորի կողմից ապահովվող նվազագույն արագությունը չի կարող ցածր լինել տվյալ սակագնային պլանով գովազդվող արագության 20%-ից:

Իրավական հետևանքներ. Գովազդվող արագության 20%-ից մինչև 70% միջակայքում փաստացի արագության ցանկացած տատանում կամ շեղում համարվում է տեխնիկապես թույլատրելի և չի հանդիսանում Օպերատորի կողմից պայմանագրային

պարտավորությունների անպատշաճ կատարում, ինչպես նաև չի կարող հիմք հանդիսանալ սակագնի վերահաշվարկի կամ փոխհատուցման պահանջի համար:

3.12. Արագության և որակի վրա ազդող հնարավոր գործոնները

Տվյալների փոխանցման փաստացի արագության փոփոխությունը կամ սահմանափակումը կարող է պայմանավորված լինել Օպերատորի հսկողության ներքո կամ դրանից դուրս գտնվող հետևյալ գործոններով.

3.12.1. Ցանցային և ենթակառուցվածքային տեխնիկական գործոններ.

1) Կիրառվող տեխնոլոգիայի առանձնահատկությունները. Տվյալների փոխանցման արագության և կայունության կախվածությունը բաժանորդային գծի կառուցման համար կիրառված տեխնոլոգիական լուծումներից (FTTH, xDSL, Docsis և այլն) և դրանց թողունակության առավելագույն տեխնիկական սահմանաչափերից:

2) Մագիստրալային և բաշխիչ ցանցի ծանրաբեռնվածություն (Congestion). Օպերատորի ընդհանուր ցանցային ենթակառուցվածքի, առանձին հանգույցների կամ կայանների ժամանակավոր ծանրաբեռնվածությունը՝ պայմանավորված տվյալ պահին ակտիվ բաժանորդների կողմից սպառվող տրաֆիկի ծավալով (այդ թվում՝ պիկ ժամերին):

3) Աշխարհագրական և ֆիզիկական հեռավորություն. Բաժանորդի վերջնակետի և օպերատորի համապատասխան տեխնիկական հանգույցի (բաշխիչ կետի) միջև առկա ֆիզիկական հեռավորությունը և մալուխային գծի երկարությունը:

3.12.2. Բաժանորդի տնօրինության տակ գտնվող տեղային (ներքին) գործոններ.

1) Անլար (Wi-Fi) միջավայրի առանձնահատկություններ. Բաժանորդի տարածքում տեղադրված անլար երթուղիչի (Router/Modem) տեխնիկական բնութագիրը, դիրքը, շենքի կառուցվածքային արգելքները (պատեր, միջնորմներ), ինչպես նաև նույն հաճախականության տիրույթում աշխատող այլ սարքավորումների կամ հարևան անլար ցանցերի առաջացրած ռադիոմիջամտությունները:

2) Ներքին մալուխային համակարգի որակ. Բաժանորդի տարածքում առկա տեղային ցանցի (LAN) մալուխների, միացումների և վերջնակետային վարդակների մաշվածությունը, ֆիզիկական վիճակը կամ անորակ մոնտաժումը:

3) Տեղային ցանցի սպառում. Բաժանորդի կողմից տեղադրված վերջնակետային մեկ կամ մի քանի սարքավորումներով միաժամանակյա ինտերնետ հասանելիության ակտիվ օգտագործումը (ներբեռնումներ, հոսքային տեսանյութեր, թարմացումներ), որը բաշխում և սահմանափակում է առանձին սարքերի հասանելի թողունակությունը:

3.12.3. Սարքավորումային և ծրագրային գործոններ.

1) Վերջնակետային սարքավորումների հզորություն. Բաժանորդի կողմից շահագործվող սարքերի (համակարգիչ, սմարթֆոն, պլանշետ) կենտրոնական պրոցեսորի (CPU), օպերատիվ հիշողության (RAM) և ցանցային քարտի (NIC) արտադրողականության կամ տեխնիկական ստանդարտների սահմանափակումները:

2) Ծրագրային ապահովման ազդեցություն. Սարքավորումներում հետնախորշային

ռեժիմով (background) աշխատող հավելվածների, ավտոմատ թարմացման համակարգերի, հակավիրուսային ծրագրերի, ինչպես նաև վնասակար կոդերի (վիրուսների) առկայությունը, որոնք ծանրաբեռնում են ցանցային միջերեսը:

3) Վիրտուալ մասնավոր ցանցեր (VPN) և վստահված սերվերներ. Բաժանորդի կողմից տրաֆիկի թունելավորման (VPN), անոնիմիզատորների կամ պրոքսի-սերվերների կիրառումը, որն ավելացնում է տվյալների փոխանցման հապաղումը (latency) և նվազեցնում արագությունը:

3.12.4. Արտաքին և անկախ տեխնիկական գործոններ.

1) Հարցվող ռեսուրսի սերվերային սահմանափակումներ. Այն հեռավար սերվերների, կայքերի կամ հարթակների թողունակության արհեստական կամ տեխնիկական սահմանափակումները, որոնցից բաժանորդը ստանում է տվյալները:

2) Միջազգային տարանցիկ կապուղիների վիճակ. Օպերատորի հսկողությունից դուրս գտնվող միջազգային տարանցիկ (transit) օպերատորների ցանցերում առկա տեխնիկական խնդիրները կամ աշխարհագրական հեռավորությամբ պայմանավորված ազդանշանի ուշացումները (Latency/Ping):

3) Անհաղթահարելի ուժի ազդեցություն (Ֆորս-մաժոր). Տեխնիկական վթարները, երրորդ անձանց կողմից մալուխային համակարգերի ֆիզիկական վնասումը, էլեկտրամատակարարման խափանումները կամ այլ արտակարգ ու անկանխելի իրավիճակները, որոնք հանգեցնում են ծառայության որակի ժամանակավոր վատթարացման:

4. ՍԱՐՔԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

4.1. Ծառայությունների մատուցման նպատակով Օպերատորի կողմից Բաժանորդին տրամադրված Սարքի նկատմամբ սեփականության իրավունքը պատկանում է Օպերատորին, իսկ Բաժանորդը ձեռք է բերում Սարքի օգտագործման իրավունք, բացառությամբ սույն Պայմանագրով և/կամ Պայմանագրով սահմանված դեպքերի: Բաժանորդն իրավունք չունի Սարքը կամ դրա նկատմամբ օգտագործման իրավունքը փոխանցել երրորդ անձանց: Բաժանորդը պարտավոր է Սարքն օգտագործել միայն Պայմանագրով և Պայմանագրով սահմանված նպատակներին ու կարգին համապատասխան: Սարքը և դրա տեղադրման համար նախատեսված մալուխը, ինչպես նաև այլ տեխնիկական միջոցները հանձնվում են հանձնման-ընդունման ակտով:

4.2. Բաժանորդը պարտավոր է ապահովել Սարքի պահպանությունը, ձեռնարկելով բոլոր անհրաժեշտ միջոցները, Սարքն օգտագործել Օպերատորի, արտադրողի կողմից և այլ կերպ Սարքին ներկայացվող պահանջներին և շահագործման կանոններին համապատասխան:

4.3. Բաժանորդը պատասխանատվություն է կրում Սարքին պատճառված այն վնասի կամ դրա կորստի համար, որն առաջացել է Բաժանորդի մեղքով կամ նրա կողմից Սարքի պահպանության համար բավարար գործողություններ չձեռնարկելու

արդյունքում:

4.4. Բաժանորդը չպետք է իրեն տրամադրված Սարքն օգտագործի անհամատեղելի այլ սարքավորումների հետ կամ որևէ այլ եղանակով, որը կարող է ազդել Օպերատորի ցանցի և/կամ սարքավորումների ապահով և անխափան աշխատանքի վրա:

4.5. Սարքի տեղադրումը, կարգաբերումը և տեղափոխումը /մատուցվող Ծառայությունների հասցեափոխության դեպքում/ իրականացվում է միայն Օպերատորի մասնագետների կողմից:

4.6. Բաժանորդը պարտավոր է Սարքը օգտագործել միայն այն վայրում, որտեղ այն տեղադրվել և կարգաբերվել է Օպերատորի մասնագետների կողմից՝ միայն Օպերատորի կողմից մատուցվող ծառայություններից օգտվելու նպատակով: Օպերատորի գրավոր համաձայնությամբ՝ Բաժանորդն իրավունք ունի Սարքը ապամոնտաժել և տեղափոխել/տեղաշարժել Օպերատորի հետ համաձայնեցված վայր:

4.7. Ցանկացած դեպքում Ծառայությունների մատուցման թերությունները վերացնելու նպատակով Բաժանորդը պարտավոր է թույլ տալ Օպերատորի ներկայացուցչին աշխատել Ցանցի, Սարքի, այլ սարքավորումների վրա, սահմանափակ կետի վրա, Ցանցին, Սարքին, հեռախոսացանցին կամ ինտերնետային ցանցին միացված լարերի և վերջնակետային սարքավորումների վրա:

4.8. Ծառայությունների մատուցման թերությունների վերացման ծախսերը կրում է Բաժանորդը, եթե թերություններն առաջացել են Բաժանորդի մեղքով:

4.9. Օպերատորն իրավունք ունի Բաժանորդի տարածքում Ցանցային միացումներ կատարելու համար Բաժանորդից պահանջելու միացման վճար:

4.10. Օպերատորն իրավունք ունի սահմանելու և կիրառելու հատուկ պայմաններ կամ սահմանափակումներ իր կողմից օգտագործման իրավունքով տրամադրվող Սարքի նկատմամբ:

4.11. Օպերատորը պատասխանատու չէ իր կողմից տրամադրված Սարքի միջոցով Բաժանորդին պատճառված վնասի համար, եթե դա տեղի է ունեցել Բաժանորդի կողմից Սարքի ոչ պատշաճ օգտագործման արդյունքում:

4.12. Սարքի կորստի կամ գողության դեպքում Բաժանորդը պարտավոր է այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Օպերատորին:

4.13. Բաժանորդը պատասխանատվություն է կրում իրեն տրամադրված Սարքի միջոցով երրորդ անձանց կողմից Ծառայությունների ցանկացած օգտագործման համար, ինչպես նաև Բաժանորդին տրամադրված Սարքի՝ երրորդ անձանց կողմից ոչ պատշաճ օգտագործման համար: Տվյալ դեպքերում, մինչև Սարքի կորստի կամ գողության մասին Օպերատորին պատշաճ տեղեկացումը, տվյալ Սարքն օգտագործող է համարվում Բաժանորդը:

4.14. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդի կողմից Սարքի կորստի կամ գողության մասին պատշաճ ծանուցվելու դեպքում կասեցնել Ծառայությունների

մատուցումը:

4.15. Բաժանորդն իրավունք չունի օգտագործել Սարքն այլ սարքերի հետ, որոնք նախատեսված չեն նման օգտագործման համար կամ օգտագործել Սարքն որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Սարքին, Ցանցին կամ որևէ ձևով ազդել Սարքի և/կամ Ցանցի գործառնության վրա:

4.16. Օպերատորի կողմից Բաժանորդին տրամադրվող Սարքը, ինչպես նաև դրանց պատկանելիքներն ու մասերը և/կամ դրանց վրա Օպերատորի կողմից կատարված ցանկացած փոփոխությունները, բարելավումները, վերանորոգման աշխատանքների արդյունքները Օպերատորի սեփականությունն են և Բաժանորդը չի կարող այն փոխանցել, վարձակալությամբ տրամադրել կամ փոփոխության ենթարկել որևէ կերպ:

4.17. Սարքը հանձնվում է Բաժանորդին և հետ է վերցվում Բաժանորդից Կողմերի միջև կազմված և Բաժանորդային պայմանագրի անբաժանելի մասը հանդիսացող հանձնման-ընդունման ակտի հիման վրա:

4.18. Սարքի ոչ պատշաճ օգտագործման, պատահական կորստի, վնասվածքի կամ հափշտակության ռիսկը փոխանցվում է Բաժանորդին՝ Սարքի հանձնման-ընդունման ակտը ստորագրելուց հետո:

4.19. Սարքի կորստի, հափշտակության կամ վնասման դեպքում Բաժանորդին նոր Սարքի տրամադրումը հնարավոր է միայն Բաժանորդի կողմից հին Սարքի համար փոխհատուցում վճարելուց հետո:

4.20. Օպերատորը պարտավորվում է անվճար փոխարինել Բաժանորդին տրամադրված Սարքը նոր Սարքով, եթե Օպերատորի կողմից հայտնաբերվել են հին Սարքի արտադրական թերություններ:

4.21. Բաժանորդային պայմանագրի գործողության ավարտից (լուծումից) հետո (անկախ լուծման պատճառներից) կամ որոշակի Ծառայություն(ներ)ի մատուցումը դադարեցնելու դեպքում Բաժանորդը պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում հանձնել (վերադարձնել) Օպերատորին վերջինիս կողմից տրամադրված Սարքը, դրա պատկանելիքները և սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը): Սարքի և/կամ դրա պատկանելիքները Օպերատորին վերադարձնելու նպատակով դրանց ապամոնտաժման աշխատանքները իրականացնելու համար Բաժանորդը պարտավոր է Օպերատորի մասնագետների համար ստեղծել հնարավորություն, իսկ Օպերատորի գրավոր համաձայնության դեպքում՝ իրականացնել ապամոնտաժման աշխատանքներն ինքնուրույն՝ առանց Սարքին և/կամ դրա պատկանելիքներին վնաս պատճառելու, և հանձնել այն Օպերատորին վաճառքի և սպասարկման սրահ:

4.22. Բաժանորդի կողմից Սարքը և/կամ դրա պատկանելիքները Օպերատորին չվերադարձնելու դեպքում, Բաժանորդը պարտավոր է 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում Օպերատորին վճարել հանձնման-ընդունման ակտում նշված Սարքի և/կամ

դրա պատկանելիքների արժեքը /գումարը/:

5. ՕՊԵՐԱՏՈՐԻ ԵՎ ԲԱԺԱՆՈՐԴԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

5.1. Բաժանորդային պայմանագիրը, սույն Պայմանների, ինչպես նաև Օպերատորի կողմից սահմանված այլ ակտերի կատարման ապահովման նպատակով՝ **Բաժանորդը պարտավորվում է՝**

5.1.1. Կատարել ու պահպանել Օպերատորի կողմից սահմանված ու հրապարակված Պայմանների, կանոնների պահանջները և հետևել դրանց ընթացքին,

5.1.2. Օպերատորի կողմից սահմանված կարգով վճարել մատուցված Ծառայությունների դիմաց, իսկ Օպերատորի կողմից նախատեսված լինելու դեպքերում կատարել երաշխիքային դեպոզիտի վճարում կամ կանխավճար,

5.1.3. Ծառայություններից օգտվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, Բաժանորդային պայմանագրին, սույն Պայմաններին և Օպերատորի կողմից սահմանված այլ կանոններին ու պահանջներին համապատասխան՝ չխախտելով երրորդ անձանց իրավունքները,

5.1.4. Ձերձ մնալ սույն Պայմաններին և/կամ Բաժանորդային Պայմանագրին հակասող ցանկացած եղանակով Օպերատորի մատուցած Ծառայություններն օգտագործելուց,

5.1.5. Չօգտագործել մատուցվող Ծառայություններն այլ անձանց համանման ծառայությունների մատուցման համար, չվերավաճառել Ծառայությունները, կամ տրամադրել այլ անձանց որևէ իրավունքով,

5.1.6. Չփոխանցել երրորդ անձանց Բաժանորդային պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտավորությունները՝ առանց Օպերատորի գրավոր համաձայնության,

5.1.7. Չօգտագործել Սարքն այլ սարքերի հետ, որոնք նախատեսված չեն նման օգտագործման համար կամ օգտագործել Սարքը որևէ այլ կերպ, որը կարող է վնաս հասցնել Սարքին, Ցանցին կամ որևէ ձևով ազդել Սարքի և/կամ Ցանցի գործառնության վրա,

5.1.8. Օպերատորի կողմից տրամադրված Սարքը պահպանել պատշաճ և սարքին վիճակում, Սարքին վերաբերվել խնամքով, գերձ մնալ Սարքի ոչ պատշաճ օգտագործումից,

5.1.9. Սարքը չտեղափոխել առանց Օպերատորի թույլտվության և Սարքը օգտագործել այն տարածքում, որտեղ այն տեղադրվել և կարգաբերվել է Օպերատորի մասնագետների կողմից,

5.1.10. Բաժանորդային պայմանագրի գործողության ավարտից (լուծումից) հետո (անկախ լուծման պատճառներից) կամ որոշակի Ծառայություն(ներ)ի մատուցումը դադարեցնելու դեպքում 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում հանձնել

(վերադարձնել) Օպերատորին վերջինիս կողմից տրամադրված Սարքը, դրա պատկանելիքները և սարքին վիճակում (հաշվի առնելով դրանց բնական մաշվածությունը):

5.1.11. Սարքի և/կամ դրա պատկանելիքներն Օպերատորին վերադարձնելու նպատակով դրանց ապամոնտաժման աշխատանքները իրականացնելու համար Օպերատորի մասնագետների համար ստեղծել հնարավորություն, իսկ Օպերատորի գրավոր համաձայնության դեպքում՝ իրականացնել ապամոնտաժման աշխատանքներն ինքնուրույն՝ առանց Սարքին և/կամ դրա պատկանելիքներին վնաս պատճառելու, և հանձնել այն Օպերատորին վաճառքի և սպասարկման սրահ:

5.1.12. Սարքը և/կամ դրա պատկանելիքները Օպերատորին չվերադարձնելու դեպքում վճարել հանձնման-ընդունման ակտում նշված Սարքի և/կամ դրա պատկանելիքների արժեքը,

5.1.13. Օպերատորի կողմից ներկայացված հաշիվներում անհամապատասխանություններ հայտնաբերելու դեպքում Հաշվետու ամսվա ավարտից 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում հայտնել այդ անհամապատասխանությունների մասին Օպերատորին, վիճարկելով հաշիվը: Վերոհիշյալ ժամկետի ավարտից հետո Բաժանորդը չի կարող այլևս վիճարկել Հաշվետու ամսվա համար Օպերատորի կողմից ներկայացված հաշիվը,

5.1.14. Անհապաղ տեղեկացնել Օպերատորին Սարքի կորստի կամ հափշտակման մասին՝ Օպերատորին ներկայացնելով Սարքի նկատմամբ իրավունքները և Բաժանորդի (լիազորված անձի) ինքնությունը հաստատող փաստաթղթեր,

5.1.15. Հետևել Բաժանորդային պայմանագրում Օպերատորի կողմից կատարվող փոփոխություններին, որոնք հրապարակվում են Պաշտոնական վեբ կայքում և/կամ ներկայացվում Վաճառքի և սպասարկման սրահներում:

5.2. Բաժանորդն իրավունք ունի՝

5.2.1. Տեխնիկական հնարավորության սահմաններում ստանալ Ծառայությունները, ինչպես նաև տեղեկատվություն ստանալ առաջարկվող Ծառայությունների, կիրառվող Սակագնային պլանների/փաթեթների, մատուցված Ծառայությունների տեսակի, ծավալի, արժեքի, գանձված գումարների և Անձնական հաշվի ընթացիկ մնացորդի մասին,

5.2.2. Օպերատորի կողմից սահմանված կարգին համապատասխան փոփոխել իրեն մատուցվող Ծառայությունների ցանկը և Սակագնային պլանները/փաթեթները,

5.2.3. Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ կամ Օպերատորի կողմից սահմանված կանոններով նախատեսված դեպքերում և Տեխնիկական հնարավորության սահմաններում հրաժարվել Օպերատորի կողմից Ցանցի միջոցով տարածվող գովազդային հաղորդագրությունների ստացման հնարավորությունից,

5.2.4. Գրավոր տեղեկացնելով Օպերատորին՝ միակողմանիորեն հրաժարվել Բաժանորդային պայմանագրից՝ վճարելով մինչև Բաժանորդային պայմանագրի

լուծման օրն իրեն մատուցված Ծառայությունների համար, ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումները (տույժերը, տուգանքները, հրաժարագինը), եթե այդպիսիք առկա են:

5.3. Բաժանորդային պայմանագիրը, սույն Պայմանների, ինչպես նաև Օպերատորի կողմից սահմանված այլ ակտերի կատարման ապահովման նպատակով՝ Օպերատորը պարտավորվում է՝

5.3.1. Ծառայություններից օգտվելու նպատակով հատկացնել Բաժանորդին Սարքը և կատարել համապատասխան ցանցային միացումներ,

5.3.2. Սահմանված կարգով Բաժանորդին տրամադրել ճշգրիտ տեղեկատվություն՝ Օպերատորի ցանցի հասանելիության, Տեխնիկական հնարավորությունների, Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային պլանով/փաթեթով նախատեսված Ծառայությունների առանձնահատկությունների, հատկանիշների, Ծառայությունների մատուցման պայմանների, մատուցված Ծառայությունների ծավալի և Անձնական հաշվի մնացորդի մասին,

5.3.3. Տեխնիկական հնարավորությունների սահմաններում ապահովել Ծառայություններից օգտվելու Բաժանորդի հնարավորությունը,

5.3.4. Ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցներն իր կողմից մատուցվող Ծառայությունների պատշաճ որակն ապահովելու համար,

5.3.5. Հանրության համար հասանելի դարձնել մատուցվող Ծառայություններից օգտվելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը,

5.3.6. Սույն Պայմանները, Սակագնային պլանները/փաթեթները, ինչպես նաև դրանց փոփոխությունները, լրացումները հրապարակել Պաշտոնական վեբ կայքում,

5.3.7. Սույն Պայմաններում, առանձին Ծառայությունների պայմաններում, Սակագնային պլաններում/փաթեթներում նախատեսվող՝ Բաժանորդի իրավական վիճակը վատթարացնող փոփոխությունների, լրացումների նախատեսման վերաբերյալ կարճ հաղորդագրությունների (SMS), էլեկտրոնային նամակների, ավտոմատ հեռախոսազանգերի կամ հեռուստատեսային հաղորդագրությունների (TVMS) միջոցով բաժանորդներին ծանուցել (նշված եղանակներով սույն ենթակետում նախատեսված տեղեկատվության ուղարկումը, հայտնումը), բացառությամբ այն դեպքերի, երբ Բաժանորդը գրավոր կարգով հրաժարվել է սույն ենթակետում նշված ծանուցումը ստանալուց:

5.4. Օպերատորն իրավունք ունի՝

5.4.1. Իրականացնել փոփոխություններ սույն Պայմանների, Ծառայությունների ցանկի, հեռարձակվող տեսալսողական ծրագրերի ցանկի, Սակագնային պլանների/փաթեթների, դրանց մատուցման պայմանների, կանոնների և սակագների մեջ, սահմանված կարգով հրապարակելով դրանք իր պաշտոնական վեբ կայքում,

5.4.2. Սահմանափակումներ կիրառել Ծառայությունների ծավալների նկատմամբ՝ էլնելով տեխնիկական անհրաժեշտությունից,

5.4.3. Լրացուցիչ ծառայությունների համար Բաժանորդից պահանջել առանձին վճար,

5.4.4. Առանց որևէ ծանուցման, միակողմանի կարգով հրաժարվել Բաժանորդային պայմանագիրը կատարելուց, կասեցնելով Ծառայությունների մատուցումը, եթե Բաժանորդը չի վճարում իրեն մատուցված Ծառայությունների համար նախքան հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 15 (տասնհինգը) ներառյալ կամ խախտում է Բաժանորդային պայմանագրի այլ դրույթները: Ընդ որում Բաժանորդային պայմանագիրը կհամարվի լուծված (դադարեցված)՝ Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրի հիման վրա Օպերատորի հանդեպ ունեցած ողջ պարտավորությունները, ներառյալ պարտքի մարման պարտավորությունը, կատարելուց և Սարքը պատշաճ կերպով հանձնման-ընդունման ակտով Օպերատորին հանձնելուց հետո,

5.4.5. Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրի պայմանների ու դրույթների խախտման դեպքում միակողմանի հրաժարվել Բաժանորդային պայմանագրից և ապամոնտաժել իր կողմից տեղադրված մալուխներն ու Սարքը,

5.4.6. Նախօրոք համաձայնեցնելով Բաժանորդի հետ՝ վերջինիս տարածքում ցանցային միացումներ կատարելու համար պահանջել միացման վճար: Միացման վճարը կարող է գանձվել Բաժանորդից այն դեպքում, եթե Օպերատորի կողմից օգտագործված նյութերի քանակը և կատարված աշխատանքների ծավալը գերազանցում են Օպերատորի կողմից սահմանված նորմերը,

5.4.7. Բաժանորդի կողմից Բաժանորդային պայմանագրի խախտման դեպքում կիրառել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պատասխանատվության միջոցներ,

5.4.8. Առանց Բաժանորդին նախօրոք ծանուցելու՝ միակողմանիորեն լուծել Բաժանորդային պայմանագիրը, եթե կնքվել է Բաժանորդային պայմանագիր, սակայն Բաժանորդային պայմանագրի կնքման օրվանից հաշված 1 (մեկ) ամսվա ընթացքում Օպերատորից անկախ հանգամանքներով պայմանավորված Բաժանորդի տարածքում Սարք չի տեղադրվել և/կամ Բաժանորդին Ծառայություններ չեն մատուցվել,

5.4.9. Ամբողջությամբ կամ մասամբ փոխանցելու Բաժանորդային պայմանագրով ամրագրված իր իրավունքները կամ զիջելու իր պարտավորություններն այլ անձի՝ առանց Բաժանորդ(ներ)ի համաձայնության,

5.4.10. Բաժանորդից պահանջել հանձնման-ընդունման ակտում նշված Սարքի և դրա պատկանելիքների արժեքը (գումարը), եթե վերջինս չի վերադարձրել դրանք:

6. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐԺԵՔԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄՆԵՐԻ ԿԱՐԳԸ

6.1. Օպերատորը միակողմանիորեն սահմանում և փոփոխում է Ծառայությունների արժեքները:

6.2. Ծառայությունների տեսակի, արժեքի և բնութագրի վերաբերյալ

տեղեկությունները զետեղված են Օպերատորի Պաշտոնական վեբ կայքում, Վաճառքի և սպասարկման սրահներում:

6.3. Ծառայությունների նկատմամբ կիրառվում են Բաժանորդի կողմից ընտրված Սակագնային պլանի/փաթեթի համար Օպերատորի կողմից սահմանված սակագները, որոնք հրապարակված են Օպերատորի Պաշտոնական վեբ կայքում և ներկայացված են Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահներում:

6.4. Կախված Սակագնային պլանից/փաթեթից, Ծառայությունների դիմաց վճարումները պետք է կատարվեն կանխավճարային կամ հետվճարային եղանակով, ինչպես նաև կարող է պահանջվել երաշխիքային դեպոզիտ կամ այլ ապահովություն:

6.5. Կանխավճարային եղանակով Ծառայությունների դիմաց վճարելու դեպքում, եթե այլ բան սահմանված չէ Օպերատորի կողմից, Ծառայությունները մատուցվում են Անձնական հաշվում առկա միջոցների և Օպերատորի կողմից սահմանված ժամկետի սահմաններում:

6.6. Կանխավճարային եղանակով Ծառայությունների դիմաց վճարելու դեպքում մատուցված Ծառայություններին համապատասխանող գումարները ուղղակիորեն նվազեցվում են Անձնական հաշվի մնացորդից և Օպերատորն ապահովում է հնարավորություն Անձնական հաշվի մնացորդն էլեկտրոնային կամ այլ եղանակով ստուգելու համար:

6.7. Բաժանորդը կատարում է կանխավճարները Սակագնային պլանով/փաթեթով նախատեսված ժամկետներում:

6.8. Ծառայություններ հետվճարային (ապառիկ) հիմունքներով Բաժանորդին մատուցելու դեպքում Բաժանորդը պարտավոր է սահմանված ժամկետում վճարել մատուցված Ծառայությունների համար հաշվարկված գումարները:

6.9. Բաժանորդին մատուցված Ծառայությունների տեսակը, ծավալը, արժեքը հաշվառվում է Բիլինգային համակարգի միջոցով:

6.10. Օպերատորը մինչև Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա 5 (հինգը) իր Վաճառքի և սպասարկման սրահներում, ինչպես նաև իր Պաշտոնական վեբ կայքում բերված գործակալներին տրամադրում է տեղեկություն Բաժանորդին մատուցված Ծառայությունների համար վճարման ենթակա գումարի չափի մասին:

6.11. Բաժանորդի համար մատուցված Ծառայությունների դիմաց ամսական վճարման ենթակա գումարի համար հիմք է հանդիսանում Օպերատորի Բիլինգային համակարգի հաշվարկը, որի հիման վրա կարող է տրամադրվել հաշիվ-ապրանքագիր կամ այլ հաշվարկային փաստաթուղթ:

6.12. Եթե այլ բան սահմանված չէ Սակագնային փաթեթի նկարագրությամբ, Բաժանորդը պարտավոր է ինքնուրույն ճշտել վճարման ենթակա գումարը և Հաշվետու ժամանակաշրջանին հաջորդող ամսվա մինչև 15-ը ներառյալ վճարել Օպերատորի կողմից Հաշվետու ժամանակաշրջանի համար հաշվարկված գումարը՝ անկախ այն հանգամանքից Բաժանորդը տվյալ ամիս օգտվել է Ծառայություններից, թե՛ ոչ:

Բաժանորդը կարող է վճարումը կատարել անկանխիկ: Անկանխիկ վճարումը պետք է կատարվի Օպերատորի կողմից Պաշտոնական վեբ կայքում նշված բանկային հաշվեհամարին կամ առցանց էլեկտրոնային վճարային համակարգերի կամ Օպերատորի գործակալների միջոցով: Օպերատորի գործակալների մասին տեղեկությունը, որոնց միջոցով Բաժանորդը կարող է կատարել անկանխիկ վճարումը, հրապարակվում է Պաշտոնական վեբ կայքում:

6.13. Կանխավճարային Սակագնային պլանի/փաթեթի շրջանակներում Բաժանորդի կողմից ընթացիկ ամսվա Ծառայությունների մատուցման համար սահմանված չափով և կարգով կատարված և/կամ ավտոմատ գեներացված վճարները վերադարձման ենթակա չեն, անկախ Ծառայությունների մատուցման, Պայմանագրի լուծման կամ Ծառայությունների այլ կերպ հրաժարվելու հանգամանքից:

6.14. Այն կանխավճարը, գումարային դեպոզիտը կամ բանկային երաշխիքը, որը վճարվել է ի ապահովումն սահմանված Ծառայությունների մատուցման, Բաժանորդին ենթակա է վերադարձման այն դեպքում, եթե վերջինս Պայմանագիրը լուծելիս կամ Ծառայությունների մատուցումից այլ կերպ հրաժարվելիս Օպերատորի առջև չունի որևէ պարտավորություն:

6.15. Որոշակի Ծառայություններ մատուցելու համար Օպերատորը կարող է պահանջել կանխավճար, գումարային դեպոզիտ կամ բանկային երաշխիք և/կամ միացման վճար, ինչի կապակցությամբ հանձնման-ընդունման ակտում կատարվում են առանձին նշումներ:

6.16. Բաժանորդը պարտավոր է ստուգել և Օպերատորին գրավոր հայտնել ամսական հաշիվներում տեղ գտած անհամապատասխանությունների մասին մինչև մատուցված Ծառայությունների համար վճարում կատարելը: Բաժանորդը, վճարելով մատուցված Ծառայությունների համար, հաստատում է այն, որ Օպերատորի կողմից ներկայացված հաշիվը չի վիճարկում:

6.17. Օպերատորը Բաժանորդի հաշվի, ինչպես նաև նրան մատուցված Ծառայությունների վերաբերյալ տեղեկությունը պարտավոր չէ պահպանել 1 (մեկ) տարուց ավելի, որից հետո Օպերատորը կարող է մերժել Բաժանորդին նրա հաշվի կամ նրան մատուցված Ծառայությունների վերաբերյալ տեղեկությունների տրամադրումը:

6.18. Բաժանորդի վճարման պարտավորությունը համարվում է կատարված վճարման ենթակա գումարը Օպերատորի Բիլինգային համակարգ մուտքագրման պահից:

Բանկային վճարումները, ինչպես նաև Օպերատորի գործակալների միջոցով կատարված վճարումները, արտացոլվում են Օպերատորի Բիլինգային համակարգում մինչև վճարման կատարման օրվան հաջորդող 3 (երրորդ) աշխատանքային օրվա ավարտը:

Բաժանորդի օգտին վճարում կատարող ցանկացած անձ համարվում է Բաժանորդի կողմից վճարման համար պատշաճ կերպով լիազորված և այդ լիազորության

իրականացման նպատակով վերջինի անունից և համար գործող:

6.19. Միայն Բաժանորդի գրավոր դիմումի հիման վրա Օպերատորը լիազորվում է ուղղումներ կատարելու սխալ վճարումներում, ներառյալ սխալ վճարման փոխանցումը Բաժանորդի հաշվից ճիշտ հասցեատիրոջը: Օպերատորը պատասխանատվություն չի կրում դրա հետևանքով Բաժանորդի կրած վնասների համար:

6.20. Տեխնիկական առանձնահատկություններից ելնելով՝ մատուցված որոշ ծառայությունների համար Բաժանորդից գանձվող գումարները կարող են Անձնական հաշվում արտացոլվել ուշացումով:

6.21. Օպերատորն իրավունք ունի օգտագործելու Բաժանորդի կողմից վճարված երաշխիքային դեպոզիտի գումարը Բաժանորդի ժամկետանց պարտքերը մարելու համար:

6.22. Բաժանորդային պայմանագրի շրջանակներում ընտրված բոլոր սակագնային փաթեթների հաշվառումը Բիլինգային համակարգում իրականացվում է մեկ անձնական հաշվով և մեկ ընդհանուր հաշվեկշռով:

Սա նշանակում է, որ առանձին սակագնային փաթեթի կամ ծառայության մակարդակում հաշվառում չի իրականացվում, և մատուցված ծառայությունների դիմաց հաշվեգրումները նվազեցնում են Անձնական հաշվի հաշվեկշիռը, իսկ կատարված վճարումները բարձրացնում են հաշվեկշիռը: Ընտրանքային վճարման հնարավորություն անձնական հաշվում ներառված առանձին ծառայության համար Բաժանորդին չի տրամադրվում:

6.23. Ըստ Ծառայության Առաջարկի և Սակագնային Պլանի՝ Բիլինգի Օրը կարող է լինել յուրաքանչյուր ամսվա վերջին օրը, Օպերատորի կողմից սահմանված այլ օր կամ յուրաքանչյուր Բաժանորդի համար Ծառայության ակտիվացման ամսաթվին համապատասխանող յուրաքանչյուր ամսվա նույն օրը: Վերջին դեպքում, երբ Ծառայությունների ակտիվացումն իրականացվում է ամսվա 29-ից 31-ն ընկած ժամանակահատվածում, Բիլինգի Օր է համարվում յուրաքանչյուր ամսվա 15-ը:

7. ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՍԵՑՈՒՄԸ ԵՎ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

7.1. Օպերատորն իրավունք ունի առանց Բաժանորդին նախօրոք ծանուցելու միակողմանի կասեցնել կամ դադարեցնել Բաժանորդին մատուցվող Ծառայությունները, այն դեպքում, երբ վերջինս մինչև Պայմաններով նախատեսված Ծառայությունների համար վճարման ժամկետի վերջին օրը վճարում չի կատարում: Ծառայությունների մատուցման կասեցումը կամ դադարեցումը չի ազատում Բաժանորդին Օպերատորի առջև իր պարտավորությունների կատարումից:

7.2. Օպերատորն իրավունք ունի կասեցնել Ծառայությունների մատուցումը նաև այն դեպքերում, եթե՝

7.2.1. Բաժանորդը Օպերատորի ցանցին միացրել է չսերտիֆիկացված կամ

Օպերատորի կողմից հայտարարված տեխնիկական պայմաններին չհամապատասխանող վերջնակետային սարքավորումներ կամ սարքեր, կամ

7.2.2. Բաժանորդը Օպերատորի ցանցին միացրել է այնպիսի վերջնակետային սարքավորումներ, որոնք համատեղելի չեն կամ միջամտում են Օպերատորի ցանցի աշխատանքին կամ հանրային էլեկտրոնային հաղորդակցության ծառայություններից օգտվելու՝ ուրիշների հնարավորությանը, կամ

7.2.3. Սահմանափակումը կամ կասեցումն անհրաժեշտ է սարքավորումների կամ Ցանցի, գծի ենթակառուցվածքների տեղադրման, վերանորոգման, փոխարինման կամ պահպանման համար, կամ

7.2.4. Բաժանորդը խախտում է Պայմանագրերը, կամ

7.2.5. Օպերատորը հայտնաբերում է, որ Բաժանորդը ոչ ճիշտ տվյալներ է ներկայացրել Ծառայությունների համար դիմելիս:

7.3. Եթե Բաժանորդը հանդիսանում է մեկից ավելի Հաշվի կամ Ծառայության օգտագործող, և եթե Բաժանորդը Օպերատորի առջև ունի չմարված պարտավորություն որևէ Հաշվի կամ Ծառայության հետ կապված, Օպերատորն իրավունք ունի կասեցնելու կամ սահմանափակելու Բաժանորդին մատուցվող բոլոր Ծառայությունները և Բաժանորդին տրամադրված բոլոր Հաշիվները մինչև պարտքի ամբողջական մարումը:

7.4. Բաժանորդն իրավունք ունի կասեցնել Բաժանորդային Պայմանագրով իրեն մատուցվող Ծառայություններից յուրաքանչյուրը կամ բոլորը միասին Ծառայությունները 1 (մեկ) տարվա ընթացքում առավելագույնը՝ 60 (վաթսու) օրյա ժամկետով՝ նախապես առնվազն 7 (յոթ) օր առաջ, բայց ոչ ուշ քան մինչև հաջորդ ամսվա 1-ը (մեկը) անվճար կարգով, համապատասխան դիմում ներկայացնելով Օպերատորին և վճարելով փաստացի մատուցված Ծառայությունների դիմաց: Կնքվախ Պայմանագրում նշված Ծառայությունների մատուցումը ժամանակավորապես կասեցնելու ժամկետը լրանալուց հետո Բաժանորդին մատուցվող Ծառայություններն ավտոմատ կերպով վերսկսվում են:

Սույն կետի իմաստով Բաժանորդն իրավունք ունի կասեցնել Բաժանորդային պայմանագրով ընտրված Ծառայություններից յուրաքանչյուրը, կամ բոլորը միասին:

Սույն կետով նախատեսված ժամանակավոր կասեցման ժամանակահատվածը չի ներառվում Պայմանագրով սահմանված դրա գործողության (Ծառայությունների մատուցման) ընդհանուր ժամկետում:

8. ԲԱԺԱՆՈՐԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԼՈՒԾՈՒՄԸ

8.1. Օպերատորն իրավունք ունի միակողմանի լուծելու Բաժանորդային Պայմանագիրը՝ առանց այդ մասին Բաժանորդին նախապես տեղեկացնելու եթե՝

8.1.1. Բաժանորդը խախտել է Բաժանորդային Պայմանագրի կետերը և/կամ օրենքը,

8.1.2. Ծառայության համար սահմանված վճարումները Բաժանորդային

Պայմանագրով նախատեսված ժամկետը լրանալուց 60 (վաթսուն) օրվա ընթացքում չկատարելու դեպքում,

8.1.3. Օպերատորին դիմել է Ամրակցված ցանցով մատուցվող Ծառայության/Ծառայությունների փաստացի օգտագործողը և սահմանված Կարգին համապատասխան ներկայացրել հավաստի տվյալներ առ այն, որ վերջին 6 (վեց) ամիսների ընթացքում տվյալ Տարածքում Ծառայություն(-ներ)ը օգտագործվում է(են) իր կողմից,

8.1.4. Բաժանորդային Պայմանագիրը լուծվում է Օպերատորի լիցենզիաների և/կամ թույլտվությունների դադարեցման դեպքում,

8.1.5. ՀՀ օրենսդրությամբ, սույն Պայմանագրով և Բաժանորդային Պայմանագրով սահմանված այլ դեպքերում:

8.2. Բաժանորդն իրավունք ունի միակողմանի հրաժարվել Բաժանորդային Պայմանագրի կատարումից՝ այդ մասին առնվազն 7 (յոթ) աշխատանքային օր առաջ գրավոր ծանուցելով Օպերատորին, մարելով վերջինիս առջև առկա բոլոր պարտավորությունները:

8.3. Բաժանորդային Պայմանագրի լուծումը, անկախ դրա հիմքերից, չի ազատում Բաժանորդին մինչև լուծման պահը և դրա հետ կապված Օպերատորի առջև գոյացած պարտավորությունների պատշաճ կատարումից: Բաժանորդը պարտավոր է վճարել մինչև Բաժանորդային պայմանագրի լուծումը մատուցված Ծառայությունների արժեքը, ներառյալ ամսական բաժանորդային վճարը, եթե Բաժանորդին մատուցված Ծառայության համար Օպերատորի կողմից սահմանված է ամսական բաժանորդային վճար, Օպերատորին վերադարձնել Սարքը և/կամ դրա պատկանելիքները հանձնման-ընդունման ակտի հիման վրա (եթե այլ բան գրավոր նախատեսված չէ Պայմանագրով և/կամ սույն Պայմանագրով), ինչպես նաև Բաժանորդային պայմանագրի միակողմանի լուծման համար Օպերատորի կողմից նախատեսված այլ վճարումները (տույժերը, տուգանքները), եթե այդպիսիք առկա են:

8.4. Այն դեպքերում, երբ Ծառայություններ մատուցելու համար Բաժանորդային Պայմանագրի կնքումից հետո 3 (երեք) ամսվա ընթացքում Բաժանորդը հնարավորություն չի ընձեռնում Օպերատորի մասնագետներին Տարածքում տեղադրել և կարգաբերել Սարքը և միացնել այն Օպերատորի Ցանցին, Բաժանորդային Պայմանագիրը համարվում է լուծված համապատասխան Ծառայության մասով:

8.5. Այն դեպքում, երբ Բաժանորդը չի ցանկանում ստանալ Բաժանորդային Պայմանագրում նշված որևէ Ծառայություն, սակայն հրաժարվում է այդ մասին համապատասխան դիմում (համաձայնագիր) ստորագրել և շարունակում է օգտվել բաժանորդագրված այլ Ծառայություններից, Բաժանորդային Պայմանագիրը չմատուցված Ծառայությունների մասով համարվում է փոփոխված (եթե Օպերատորը նման փոփոխությանը դեմ չէ և/կամ այդ փոփոխությունը որևէ անցանկալի հետևանք չի առաջացնում վերջինիս համար): Այդ փոփոխությունը Բաժանորդային Պայմանագրում

փաստաթղթային տարբերակով չամրագրելու հետևանքով առաջացող բոլոր բացասական հետևանքների համար ամբողջությամբ պատասխանատվություն է կրում Բաժանորդը:

8.6. Բաժանորդային Պայմանագրի լուծման համար Բաժանորդը պարտավոր է ներկայանալ Օպերատորի Վաճառքի և սպասարկման կենտրոն և լրացնել Օպերատորի կողմից սահմանված ձևի դիմում, եթե այլ բան սահմանված չէ սույն Պայմանագրով, Պայմանագրով կամ Օպերատորի այլ իրավական ակտերով:

9. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՏՐԱՄԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐԸ

9.1. Բոլոր այն տեղեկությունները, որոնք Օպերատորը պարտավոր է տրամադրել Բաժանորդին, հրապարակվում և հասանելի են Օպերատորի Պաշտոնական վեբ կայքում, ինչպես նաև Վաճառքի և սպասարկման սրահներում՝ բացառությամբ այն տեղեկությունների, որոնց համար Պայմանագրով կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված է տրամադրման այլ ձև:

9.2. Այն դեպքում, երբ Օպերատորը պարտավոր է գրավոր ծանուցում ուղարկել Բաժանորդին, գրավոր ծանուցումը Բաժանորդին է հանձնվում Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահում կամ ուղարկվում է փոստային ծառայության կամ էլեկտրոնային փոստի միջոցով՝ Բաժանորդի կողմից Պայմանագրի մեջ նշված (այդ թվում էլեկտրոնային փոստի) հասցեով, որը համարվում է պատշաճ ծանուցում՝ անկախ այն հանգամանքից՝ Բաժանորդն իրականում ստացել է ծանուցումը, թե ոչ: Օպերատորի կողմից Բաժանորդին ուղարկված (այդ թվում էլեկտրոնային փոստի կամ հաղորդակցության այլ եղանակների միջոցով, եթե դրանցով հնարավոր է նույնականացնել Բաժանորդին և առկա է հետադարձ կապի հնարավորություն) կամ Վաճառքի և սպասարկման սրահում տրամադրված գրավոր ծանուցումը ստանալուց հրաժարվելը համարվում է պատշաճ ծանուցում:

9.3. Բաժանորդի կողմից Օպերատորին ներկայացված փաստաթղթերով հավաստվող տվյալների փոփոխության դեպքում Բաժանորդը պարտավոր է 10 (տասը) օրվա ընթացքում այդ մասին հայտնել Օպերատորին և ներկայացնել նոր տվյալները հավաստող փաստաթղթերը:

9.4. Բաժանորդի կողմից Օպերատորին ուղղված ցանկացած գրավոր դիմում կամ ծանուցում պետք է պատվիրված նամակով ուղարկվի սույն Պայմանագրին համապատասխան Օպերատորի հասցեով, էլեկտրոնային հասցեով կամ հանձնվի Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահում: Օպերատորի Վաճառքի և սպասարկման սրահների մասին տեղեկությունները հրապարակվում են Պաշտոնական վեբ կայքում:

10. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆԸ և ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

10.1. Բաժանորդային Պայմանագիրը ստորագրելով՝ Բաժանորդը տալիս է

համաձայնություն իր անձնական տվյալների մշակումը Օպերատորի կողմից ՀՀ օրենսդրության համաձայն իրականացնելու (ներառյալ Էլեկտրոնային՝ թվային, գրիչով ստորագրված բոլոր գործարքներից բխող) Անձնական տվյալների մշակման պայմանների և անձնական տվյալների պաշտպանության քաղաքականության համաձայն իրականացնելու համար:

10.2. Օպերատորն ապահովում է Բաժանորդների անհատական տվյալների, նրանց կողմից օգտագործվող Ծառայությունների տեսակի, արժեքի, վայրի, նպատակի, քանակի և տեխնիկական պայմանների վերաբերյալ տեղեկությունները, ինչպես նաև ՀՀ օրենսդրությամբ նախատեսված տեղեկությունների գաղտնիությունը: Այդ տեղեկությունները ենթակա չեն հրապարակման կամ այլ անձանց փոխանցման, բացառությամբ սույն Պայմանագրով, Պայմանագրով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերի:

10.3. Օպերատորն իրավունք ունի բացահայտել նախատեսված տեղեկությունները՝

10.3.1. Առանց Բաժանորդի թույլտվության, երբ դա նախատեսված է ՀՀ օրենսդրությամբ, կամ

10.3.2. Բաժանորդի գրավոր համաձայնության հիման վրա, կամ

10.3.3. Եթե բացահայտումն անհրաժեշտ է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով Օպերատորի իրավունքների կամ օրինական շահերի պաշտպանության համար:

10.4. Օպերատորն իրավունք ունի նաև Բաժանորդի կողմից Օպերատորին վճարման ենթակա գումարի մասին տեղեկությունը հայտնել գործակալին, որի միջոցով Բաժանորդը հնարավորություն կստանա վճարել իր հաշիվը:

10.5. Բաժանորդը տեղեկացված է, գիտակցում և ընդունում է, որ ծառայությունների մատուցման ընթացքում զանգերի կենտրոնից և/կամ վաճառքի և սպասարկման սրահներից Օպերատորի հեռախոսահամարից զանգեր ստանալիս կամ վերջիններիս զանգահարելիս հեռախոսազանգերը կարող են ձայնագրվել՝ սպասարկման որակի բարձրացման նկատառումներից ելնելով:

10.6. Պայմաններով և/կամ ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում Բաժանորդի վերաբերյալ գաղտնի տեղեկության բացահայտման դեպքում Բաժանորդն իրավունք չունի Օպերատորից որևէ վնասի հատուցում պահանջել:

10.7. Օպերատորը, որպես մարքեթինգային և/կամ առևտրային գործունեության մի մաս, ինչպես նաև պարտքերի հավաքագրման կամ Բաժանորդի նույնականացման տվյալների ճշգրտման և թարմացման համար, գրավոր ձևով, հեռախոսով, կարճ հաղորդագրությունների (SMS) ծառայությունների միջոցով կամ այլ կերպ կարող են կապ հաստատել Բաժանորդի հետ՝ օգտագործելով Բաժանորդի անձնական տվյալները և սույնով Բաժանորդը թույլատրում է այս ձևով կապի հաստատումն իր հետ:

10.8. Պայմաններով նախատեսված Ծառայությունների մատուցման տեխնիկական, տեխնոլոգիական գործընթացների, ինչպես նաև Բաժանորդների

սպասարկման ապահովման նպատակով Օպերատորը կարող է Բաժանորդի անձնական տվյալ հանդիսացող անուն, ազգանունը (իրավաբանական անձանց դեպքում՝ անվանումը), հեռախոսահամարը և էլեկտրոնային փոստը փոխանցել ՀՀ տարածքում և ՀՀ տարածքից դուրս ծառայություններ մատուցող իր գործընկերներին՝ խստիվ պահպանելով ՀՀ-ում գործող օրենսդրական կարգավորումները:

11. ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

11.1. Օպերատորը պատասխանատվություն է կրում Պայմանագրով, Պայմաններով, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

11.2. Բաժանորդը որևէ դեպքում իրավունք չունի Օպերատորից պահանջել վճարել անուղղակի վնասները և բաց թողնված օգուտները:

11.3. Օպերատորի պատասխանատվությունը որևէ դեպքում չի կարող գերազանցել Բաժանորդի կողմից փաստացի վճարված միջին ամսական գումարի՝ Օպերատորի մեղքով Ծառայություններից օգտվելու անհնարինության ժամկետին համապատասխան՝ համամասնորեն հաշվարկված գումարը:

11.4. Օպերատորը պատասխանատվություն չի կրում երրորդ անձանց կողմից Ծառայությունների մատուցման ընթացքում խոչընդոտներ առաջացնելու համար, ինչպես նաև երրորդ անձանց կողմից Օպերատորի ցանցի միջոցով Բաժանորդին հասցված որևէ վնասի համար:

11.5. Բաժանորդին օգտագործման իրավունքով տրամադրված Սարքի, մալուխների, ինչպես նաև Սարքի տեղադրման/գործածման, շահագործման համար անհրաժեշտ տեխնիկական միջոցների վնասման կամ կորստի դեպքում Բաժանորդը պատասխանատվություն է կրում համապատասխանաբար վնասի կամ կորստի չափով, եթե ապացուցվում է նրա մեղքը:

11.6. Նոր Սարքի տրամադրումը բաժանորդագրումից հետո տրամադրված Սարքի կորստի, հափշտակության կամ վնասման դեպքում հնարավոր է միայն Բաժանորդի կողմից Սարքի դիմաց փոխհատուցելու դեպքում:

11.7. Օպերատորը պարտավորվում է Բաժանորդին տրամադրված Սարքը անվճար փոխարինել նորով, եթե Օպերատորի կողմից այն ճանաչվել է արտադրական թերություն ունեցող:

11.8. Օպերատորն իրավունք ունի Բաժանորդից պահանջել վճարել իր բոլոր այն վնասները, որոնք Օպերատորը կրել է Բաժանորդի կողմից սույն Պայմանները, Պայմանագիրը կամ Օպերատորի այլ իրավական ակտերով սահմանված պահանջները խախտելու արդյունքում:

11.9. Բաժանորդը սեփական ռիսկով է օգտվում Օպերատորի և երրորդ անձանց կողմից մատուցվող ծառայություններից: Օպերատորը չի կարող որոշել

Ծառայությունների համապատասխանությունը Բաժանորդի կարիքներին:

11.10. Օպերատորը պատասխանատվություն չի կրում՝

- Դժբախտ պատահարի կամ իր գործընկերների կամ գործակալների միջոցով փոխանցվող ազդանշանների կամ մատուցվող ծառայությունների խափանման կամ դադարեցման հետևանքով առաջացած ընդհատումների, անջատումների, խափանումների կամ որոշակի տեսակի ծառայությունների, Սակագնային պլանների/փաթեթների մեջ կատարված փոփոխությունների համար,

- Բաժանորդին պատկանող համակարգիչների կամ այլ սարքավորումների անսարքության պատճառով Ծառայությունների անպատշաճ մատուցման կամ ընդհատման համար,

- Ծառայության մատուցման ռեժիմի խախտման այն դեպքերի համար, որոնք Բաժանորդի կամ երրորդ անձանց գործողությունների հետևանք են, այդ թվում՝ Օպերատորի հետ համագործակցող երրորդ անձանց կողմից Օպերատորին մատուցվող ծառայությունների անսպասելի դադարեցման դեպքերում,

- Աշխատանքների, մասնավորապես՝ ընթացիկ, Ցանցի ամրապնդման, պահպանման, ընդարձակման կամ վերանորոգման, հետևանքով առաջացած ընդհատումների և խափանումների համար,

- Սպամի, հակերային գործունեության, վիրուսների փոխանցման և դրա հետևանքով Բաժանորդին պատճառված վնասների համար:

11.11. Օպերատորը չի իրականացնում վերահսկողություն իր Ցանցով տեղափոխվող տեղեկության նկատմամբ և պատասխանատու չէ Բաժանորդի կողմից ստացված և/կամ ուղարկված տեղեկության և բովանդակության ճշտության և օրինականության համար: Օպերատորի ցանցի միջոցով տեղափոխվող ցանկացած տեղեկություն կամ բովանդակություն օգտագործվում է Բաժանորդի ռիսկով և պատասխանատվությամբ:

11.12. Օպերատորը պատասխանատվություն չի կրում վճարումներն ընդունող միջնորդի կողմից սահմանված կանոնների համաձայն որևէ լրացուցիչ միջնորդավճարի գանձման համար:

11.13. Օպերատորը պատասխանատվություն չի կրում իր կողմից Բաժանորդին մատուցվող Ծառայությունները երրորդ անձի կողմից ցանկացած կերպ օգտագործելու համար:

11.14. Բաժանորդը պատասխանատու է սույն Պայմաններով, Պայմանագրով, ինչպես նաև Օպերատորի այլ իրավական ակտերով սահմանված իր պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար:

12. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

12.1. Օպերատորի և/կամ Բաժանորդի կողմից պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար վերջիններս ազատվում են

պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով: Անհաղթահարելի ուժ է համարվում այն հանգամանքը, որը ծագել է Բաժանորդային Պայմանագիրը կնքելուց հետո և որը հնարավոր չէր կանխատեսել կամ կանխարգելել:

12.2. Սահմանված պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Օպերատորին և/կամ Բաժանորդին ազատվում են պատասխանատվությունից, եթե պարտավորությունների պատշաճ կատարման անհնարինությունը տեղի է ունեցել բնական (երկրաշարժ, կայծակ, ամպրոպ, անձրև, կարկուտ և այլն) կամ տեխնոգեն բնույթ կրող արտակարգ դրությունների, ռազմական գործողությունների, գործադուլների հետևանքով, օրենսդրության փոփոխության, նորմատիվ իրավական ակտերի ընդունման, ՀՀ տարածքում էլեկտրահամակարգերի (էլեկտրականության, հոսանքի խափանում) աշխատանքների ձախողման, հեռուստաալիքների, ռադիոալիքների, համացանցային կայքերի և զանգվածային լրատվության միջոցների չծրագրված անջատման, տեղեկատվության միջոցի աշխատանքի խափանման արդյունքում և այլ իրավիճակների հետևանքով, որոնք կախված չեն Օպերատորի և/կամ Բաժանորդի կամքից և անհնարին են դարձնում նրանց Պայմանագրով սահմանված պարտավորությունների կատարումը:

12.3. Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա Օպերատորը և/կամ Բաժանորդը իրավունք ունի լուծել Պայմանագիրը այդ մասին նախապես գրավոր տեղեկացնելով մյուս Կողմին՝ առնվազն 3 օր առաջ:

13. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

13.1. Օպերատորի և/կամ Բաժանորդի սույնով պայմանավորվում են միմյանց միջև Պայմանների և Բաժանորդային պայմանագրի կապակցությամբ ծագած բոլոր վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով: Բանակցությունների միջոցով համաձայնություն ձեռք չբերելու դեպքում՝ վեճերը լուծվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

13.2. Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերի հետ կապված ցանկացած փաստաթղթի վերաբերյալ ծանուցումներն ուղարկվում են Օպերատորի և Բաժանորդի տրամադրված հասցեներով (էլեկտրոնային փոստի հասցե նշված լինելու դեպքում կարող է ուղղարկվել նաև այդ հասցեով) և համարվում են հասցեատիրոջ կողմից ստացված (հանձնված), թեկուզև հասցեատերն այդ հասցեում այլևս չի գտնվում կամ չի բնակվում, (էլեկտրոնային փոստի պարագայում՝ այլևս դրա փաստացի օգտատերը չէ) եթե սույն Պայմաններով սահմանված կարգին համապատասխան միմյանց գրավոր չեն հայտնել իրենց փոստային, այդ թվում էլեկտրոնային փոստի, հասցեները (գտնվելու վայրերը) փոխելու մասին:

13.3. Օպերատորը և Բաժանորդը պարտավորվում են սույն Պայմաններին համապատասխան 10 (տասը) օրվա ընթացքում տեղեկացնել միմյանց փոստային

հասցեների (գտնվելու, բնակության, հաշվառման վայրերի էլեկտրոնային փոստի հասցեների), ինչպես նաև այլ վավերապայմանների փոփոխությունների մասին: Ընդ որում էլեկտրոնային փոստի հասցեների փոփոխության դեպքում ծանուցումն ուղարկվում է ծանուցումը ստացող կողմի վերջին հայտնի հասցեին: Փոփոխությունների մասին մյուս կողմին չիրազեկելու անբարենպաստ իրավական հետևանքների ռիսկը կրում է իրազեկելու պարտավորություն կրող կողմը:

14. ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

14.1. Սույն Պայմաններն ուժի մեջ են մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից համապատասխան մասով փոխարինում են Օպերատորի կողմից նախկինում հրապարակված էլեկտրոնային հաղորդակցության և հարակից այլ ծառայությունների մատուցման հիմնական պայմաններին (հրապարակային առաջարկին/օֆերտային):

14.2. Սույն Պայմաններն ուժի մեջ մտնելու օրվա դրությամբ գործող Սակագնային Փաթեթները/Պլանները, Առաջարկների Նկարագրերը, Ծառայությունների հրապարակված Արժեքները (Գնացուցակը), Կարգերն ու Կանոնները մնում են ուժի մեջ և ենթակա են վերանայման ըստ անհրաժեշտության:

14.3. Մինչև սույն Պայմանների ուժի մեջ մտնելը կնքված Բաժանորդային Պայմանագրերը շարունակում են գործել դրանցով սահմանված ժամկետով, իսկ դրանցով սահմանված ժամկետների ավարտից հետո գործում են սույն Պայմանների ամրագրված դրույթներին համապատասխան:

14.4. Օպերատորն իրավունք ունի ցանկացած ժամանակ միակողմանիորեն փոփոխել Պայմանները, ինչպես նաև Ծառայությունների մատուցմանը վերաբերող ցանկացած պայման և/կամ կարգ՝ հրապարակելով դրանք Պաշտոնական վեբ կայքում: Փոփոխություններն ուժի մեջ են մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից, եթե դրանցով ավելի ուշ ժամկետ սահմանված չէ:

14.5. Օպերատորն իրավասու է հայտարարել ակցիաներ (խթանիչ առաջարկներ) և/կամ գեղչեր, որոնք հայտարարված ժամանակահատվածում կհանդիսանան Բաժանորդային Պայմանագրի լրացում և դրա բաղկացուցիչ մասը: Դրանց վերաբերյալ տեղեկությունը, այդ թվում՝ դրանք ընդունելու կարգը, հրապարակվում է Վեբ-կայքում և/կամ հասանելի դարձվում Վաճառքի և սպասարկման կենտրոններում (կամ տարածվում են Օպերատորի կողմից նախընտրված այլ ձևերով):

14.6. Սույն Պայմաններում և մատուցվող Ծառայությունների պայմաններում կատարվող փոփոխությունների, լրացումների դեպքում, սույն Պայմաններին համապատասխան Բաժանորդներին ուղարկվում են կարճ հաղորդագրությունների (SMS), էլեկտրոնային նամակների, ավտոմատ հեռախոսազանգերի և հեռուստատեսային հաղորդագրությունների (TVMS) միջոցով, անկախ նշված եղանակի միջոցով ծանուցումներ ստանալուց Բաժանորդի հրաժարված լինելու հանգամանքից: Նշված

հաղորդագրությունների արխիվացումը էլեկտրոնային բազայում և դրանց պահպանումը կատարվելու է 2 (երկու) տարի ժամկետով:

14.7. Օպերատորը պարտավոր է հետևել (ստուգել) սույն Պայմանագրում և Օպերատորի կողմից ընդունվող այլ իրավական ակտերում կատարվող փոփոխություններին, որոնք հրապարակվում են Օպերատորի Վեբ-կայքում և/կամ ներկայացվում Վաճառքի և սպասարկման կենտրոններում:

15. ՕՊԵՐԱՏՈՐԻ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

«Էյչնեթ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն

Իրավաբանական հասցե՝

ՀՀ, Արմավիրի մարզ, գ.Փարաքար, Մեքենագործների 2/39

Գործունեության հասցե՝ ՀՀ, ք.Երևան, Նալբանդյան 7 բն.15

ՀՎՀՀ 04724812

Հ/Հ՝ 1660004810350100 Էվոկաբանկ ՓԲԸ

Հեռ.՝ 044 54 73 20

Տնօրեն՝ Արսեն Խաչատրյանին